

ՈՃԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՌՅԱՍԱՐԱԿ

ԵՒ

ԵՐԵՒԱՆԻ ՆԱՀԱՆԳՈՒՄ ՄԱՍՆԱԴՈՐԱՊԷՍ

Հրապարակական Դասախօսութիւն

ԳԱԲՐԻԷԼ ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆԻ

Խորացած Երեւանի Քաղաքային Ակումբի դահլիճում, 1889 թ. ապրիլ ամսում:

(Ետունակութիւն և վերջ ¹⁾)

II.

Ոճրագործութիւնը Երեւանեան նահանգում մինչև անգամ գրականութեան մէջ ձեռք չ'առնւած մի խնդիր է: Զը խօսելով մասնագիտօրէն այս խնդրին վերաբերելի վաստակների մասին, չը կայ մինչև անգամ կողմնակի կերպով էլ սրան վերաբերող գրածքներ:

Ըստ այսմ ինքս էի ստիպւած հում նիւթ որոնելու: Տարաբաղ-դաբար այս նիւթը՝ վերջին 10 տարւայ ոճիրների թւի ու տեսակների մասին՝ այնքան անբաւարար յայտնեց, որ նրանց հիման վերայ եզրափակումներ անել—կը նշանակէր գիտակցաբար մոլորութեան մէջ ընկնել: Այժմ ես բաւականանում եմ միայն ցոյց տալով ոճիրների քանի մի նիւթիչ—գործիչները (Ֆակտօրները), իսկ ապագայում կ'աշխատեմ տալ հասարակութեանդ Երեւանեան նա-

¹⁾ Տե՛ս «Մուրճ»-ի 11-րդ համարը:

հանգի ոճիրների առաւել մանրապատում պատկերը: Իսկ եթէ այսօրւան այս համառօտ նկարագրութեան մէջ մէկն ու մէկը ձեզանից նեղանայ իմ խօսքերից, յոյս ունիմ որ կը ներէ ինձ. որովհետեւ այս ամենը բղիտում են հասարակութեանը և պետութեանը օգտաւէտօրէն ծառայելու ցանկութիւնից, որ և ես պարտաւորութիւն եմ համարում մեզանից ամենքի համար. միւլենոյն ժամանակ *errare humanum est*—մարդս սխալական է:

Դասախօսութեանս առաջին մասում ասացինք, որ իբրեւ հիմունք ճանաչելու թէ մի երևոյթ ոճիր է թէ ոչ, համարւում է մի ազգի հիմնական աշխարհահայեցողութիւնը: Տեսնենք թէ ո՞րպիսի աշխարհահայեցողութիւն ունեցել են Երևանեան նահանգի բնակիչները:

Ներկայումս գործածող Уложение о Наказаніяхъ, ինչպէս արդիւնք եւրոպական կեանքի և գիտութեան, հասկանալի է, որ շատ անգամ չէ համապատասխանում նրանց հասկացողութեանը: Մերկաբան չը լինելու համար առաջ բերենք օրինակներ:

Уложение о Наказаніяхъ 1637 յօդւածն այսպէս է որոշում կողոպտումը: Կողոպտում համարում են նախ՝ որ և իցէ մէկին պատկանած կամ նրա մօտ գտնւած ստացւածքի խլելը բռնութեամբ կամ մինչև իսկ սպառնալիքներով, բացայն տեսակ, որ այդ սպառնալիքներից կամ բռնութիւնից վտանգաւորութիւն չէ առաջացել ոչ նրա կեանքի, ոչ նրա առողջութեան կամ ազատութեան համար. երկրորդ՝ ամեն բացարձակ չափշտակութիւն ինչ և իցէ ստացւածքի նոյն իսկ ստացւածքի տիրոջ կամ ուրիշ մարդկանց ներկայութեամբ, թէկուզ առանց սպառնալիքների ու բռնութիւնների:

Պատժական կանոնադրութեան 1641 յօդւածն ասում է. — եթէ կողոպտողը սպառնալիքնւած է եղել, թէկուզ և չէ գործադրել իւր գէնքերը՝ կողոպտողին նոյն իսկ սպառնալիք տալու համար, նրա արարմունքը համարւում է աւազակութեան տեսակներից և նա դատապարտւում է ամեն իրաւունքներից զրկւելու և տաժանակիր աշխատանքների աքսորւելու 4-ից մինչև 6 տարի ժամանակով:

Այդ ոճիրի համար այդպիսի ծանր պատիժ նշանակելով՝ օրէնսդիրը առաջ է ունեցել այն յանդգնութիւնը, որով յանցաւորը գործում է այս չարագործութիւնը և որը ցոյց է տալիս ոճրագործի

լիովին փափաքած լինելը և այն բռնութիւնը, որը նա գործում է անձնաւորութեան վերայ: Բացի զրանից և այն հանգամանքը, որ Ռուսաստանում զէնք կրելը սովորական երեւոյթ է և զէնքը ձեռքին այդպիսի մի գործ կատարելը արդէն լիովին բացառւած է նրա յանցաւոր դիտաւորութիւնը և այս դիտաւորութեան ուժգնութիւնը այս դէպքում:

Երեւանեան նահանգում պատահում են երեւոյթներ, որոնք լիովին այս յօդաւորի տակն են ընկնում, բայց տեղական ազգաբնակչութեան աչքում այդպիսի ոճրային բնաւորութիւն չեն կրում:

Այսպէս, տեղական բնակիչների սովորութեան մէջ կայ, որ երիտասարդ մարդիկ, իրանց կտրիճութիւնը ցոյց տալու համար, գիւղի ծայրն են դուրս գալիս և խլում են մէկից զառ, միւսից մի քանի շալի և այլն. հասկանալի է, որ այս ամենը կատարւում է բաւական սպառնալիքներով և՛ մինչև անգամ զէնքով, և այս ոճիր է համարւում: Սա ընդհանուր անունով ասւում է՝ շուլուխութիւն, լօթութիւն, թալաքաց: Որ երեւանեան նահանգի բնիկները այսպիսի փաստերին յանցաւորութեան նշանակութիւն չեն տալիս՝ հիմունք ունի, և այնու, որ մենք տակաւին քաղաքակրթութեան այն աստիճանի վերայ կանգնած ազգութիւններ ենք, երբ ոճիրները դրամական, նիւթական և ոչ թէ դիտաւորութեան կողմից են գնահատւում: Մեր տեսակէտից՝ կողոպտումը համարւում է նշանաւոր ոճիր, եթէ կողոպտւած ստացւածքը մեծ զին, արժէք ունի, իսկ եթէ մի դառ կամ մի այծ է, այդ յանցանք չէ, այլ՝ ինչպէս ասացինք՝ շուլուխութիւն, թալաքաց և այլն: Այս պատճառով այնպիսի փաստերն՝ ինչպէս օրինակ յայտնի պարագաներում մի քանի զրւանքայ բամբակ կամ մի քանի մանէթ թոցնելը, որոնց մեր դատարանը, վերոյիշեալ յօդաւորի տակ ձգելով, ոճրագործներին դատապարտում է 4—6 տարւայ տաժանակրութեան — ասւում ենք, այսպիսի փաստերը միայն շուլուխութիւն են համարւում:

Այսպէս և ցեղային հակումները չեն կարող նմանապէս լինել իբրեւ որոշողութիւն երեւոյթների ոճրայնութեան. որովհետեւ մեր նահանգը չէ ներկայացնում համացեղութեան միապաղաղ մի զանգւած: Уложение о Наказаніяхъ այն լաւ կողմն ունի, որ մենք, դրանով վախելում ենք եւրոպական քաղաքակրթութեան պտուղ-

ները. իսկ Уложение ինքն ըստ ինքեան ներկայացնում է մի բաւականին գեղեցիկ կերպով մշակած օրինագիրք:

Րնկերական երևոյթները իւրաքանչիւր տեղի ուսումնասիրելու համար, պէտք է դիմել այն տեղի պատմութեանը. պատմութիւնն է այն արմատը, որի վերայ բնութիւնը աճում է յայտնի երևոյթը. ուստի մեր նահանգի ոճիրներն ուսումնասիրելու համար, կարևոր է գէթ հարեանցի նկարագրել մեր նահանգի պատմութիւնը:

Նրեանի նահանգը 428 թ. մինչև 1827 թ.—1400-ից աւելի տարի—չէ ունեցել կառավարութիւն ա՛յն մտքով, ինչպէս որ մենք ենք հասկանում: Պարսիկ մարզպանները, յոյն կիւրապաղատները, սելճուկները, վրացիք, մոնղոլները, թիւրքերը, պարսիկները փոխ առ փոխ տիրել են այս երկրին և աւերել են նրան. նա եղել է կրկէս անվերջ պատերազմների, արիւնհեղութեան և ամեն տեսակ անօրինութիւնների: Նրբէք այստեղ ոչ մարդը և ոչ ստացւածքն ապահովութիւն չեն տեսել: Ուստի և հասկանալի է, որ այս երկրի բնիկների մէջ չէր կարող զարգանալ խղճմտանքը, ուրիշին գթալը, մարդասիրութիւնը, որոնք պահում են մարդուս յանցանքներ գործելուց: Ընդհակառակը՝ աճել հասունացել են զգացմունքները չարութեան, նախանձի, յանդգնութեան ու երկչոտութեան, ստորութեան ու սանձարձակութեան, որոնք մարդուն հրում, տանում են դէպի յանցանքներ գործելը:

Բայց Նրեանի նահանգն եկող զանազան ազգութիւնները պատմութեան ընթացքում խառնւել են և այժմ ներկայացնում են երեք գլխաւոր խումբ, որոնց իւրաքանչիւրի յատկորոշ բնաւորութեանը դառնանք մենք:

Նրկրիս նախաբնակները հայերն են համարւում: Նրկար ժամանակ սրանք պատերազմներ են մղել մոնղոլական վայրենի հրոսակների դէմ, մինչև որ վերջապէս բոլորովին ընկճւել են: Կորցնելով իրանց առևտուրը, արդիւնահանութիւնը ու հողերը՝ դարձել էին նաւադոշների Ֆահլաները՝ մշակները: Եթէ աչքի առաջ ունենանք անցեալ ժամանակների օրէնքները, չէ կարելի զարմանալ, որ հայերի քրտնաթոր վաստակներով օգտւել են ուրիշները, ընդ նմին և ստորացրել, անարգել, նրանց կինն ու որդիքը խլել յափըշտակել են: Նրանք զրկւած են եղել գրեթէ բոլոր իրաւունքներից,

բացի սերելու իրաւունքից: Այսպիսի հանդամանքներն անհրաժեշտօրէն պէտք է արմատաւորէին նրանց մէջ չարութեան ու նախանձի զղացմունք: Քաղաքականապէս ստորադրւած իրանց նւաճողներին, բնականաբար պէտք է աշխատէին ձեռք բերել, որքան կարելի է, շատ նիւթական հարստութիւն, իսկ այսօրինակ գործունէութիւնը զարգացնում է մարդու մէջ հակումն ոճիրներ գործելու ստացւածքի-ունեցածի դէմ և նւաղացնում է անհատի մէջ ոճրագործական զգացումներին ընդպիմադրող զգացումները: «Զիմմաներին» (քրիստոնեաներին) այսպիսի համակարգօրէն ստորացնելը, ասում է պրոֆէսոր Գիրգաս քրիստոնեաների դրութիւնը արեւելքում նկարագրելուս, վերին աստիճանի կորստաբեր էր բարոյականի վերաբերմամբ, բայց որում դրա հետեւանքն եղաւ ոչ միայն նւաճողներին և նւաճողներին միմեանցից զատող ասելութեան զօրանալը, և հետեւապէս արգելք եղաւ նրանց միանալուն — ձուլւելուն, այլ, բացի դրանից, և խեղդեց բոլոր աղնիւ կողմերը զիմմաների, որոնք հարկադրւած էին իրանց ասպհովութեան համար դիմելու և՛ ստախօսութեան և՛ խարեւալութեան իրանց տիրապետողների վերաբերմամբ: Այսպիսով նրանց ընդհանուր ոգին ու մտածողութեան կերպը ենթարկեցին ապականութեան. ուստի և զարմանալի չէ, որ մենք չենք զանում նրանց մէջ ոչ հայրենասիրութիւն, ոչ ձգտում դէպի հանրական բարիքը — այլ իւրաքանչիւր ոք մտածում է իւր սեպհական շահերի համար:

Նրեւանի նահանգի մէջ ուսաների երեւան գալով, պատմականօրէն հայազգի մէջ այնպիսով առաջացած, հասունացած ոճրագործական դժերը, երբ մի փոքր ազատութիւն ստացան, չը խուսափեցին լոյս տեսնելու: Յայտնւեցին մի քանի գիւղերում խաչագողներ, որոնք զնալով Ռուսաստան՝ ձեւացնում էին իրանց յոյն քահանաներ և փողեր էին ժողովում իբր թէ յօգուտ Փրկչի գերեզմանի, կամ իբր թէ կամուրջների, եկեղեցիների, վանքերի շինութեան համար: Նրանցից յետոյ յայտնւեցին կեղծ թղթադրամներ շինողներ, և Նրեւանի նահանգական դատարանը ունեցած է արդէն մի քանի խոշոր դատեր այս մասին:

Ասում են, քսան տարի սրանից առաջ Նրեւանում եղել է բաւական յայտնի հայերի մի ընկերութիւն, որոնք դատեր են յա-

րուցել և իրանք վկայութիւններ տալով, ստացել են մասը շահած գործից: Այժմ, որքան ես նկատել եմ, հայերի մէջ տարածւած են ոճիրներ ստացւածքի դէմ, այն է՝ խնամակալական, հոգաբարձական գործերում ժառանգութիւններ ստանալու, իրանց սնանկ հրատարակելու, խարդախութիւններ, կեղծիքներ գործելու վերաբերութեամբ և այլն:

Դառնանք թուրքերին: Ո՛ր ճանապարհով են նրանք եկել Երեւանի նահանգը, ես ճշգուծեամբ որոշել չեմ կարող. բայց նրանց մեծամասնութիւնն ասում է, որ նրանք Ղարաբաղից եկածներ են: Առհասարակ շատ հիմունքներ կան ենթադրելու, որ նրանք Թաթարստանից և Թուրքմենստանից եկել են այստեղ Կասպեան ծովի ափերով: Այս խնդիրը կարևոր է մասամբ նրա համար, որ հաստատում է նրանց մոնղոլական ցեղից ծագելը: Նրանք եկել են մեր երկիրը իբր աշխարհակալներ կիսավայրենի հրոսակներով—չ'իմանալով ոչ երկրագործութիւն և ոչ այգեգործութիւն: Նրանք իրանց համար կերակուր էին հայթհայթում անասնապահութեամբ, աւարառութեամբ և զինուորական ծառայութեամբ: Կենցաղավարութեան այս ձևը զարգացրեց նրանց մէջ ծուլութիւն, արիւնարբութիւն և հակումն չը ճանաչելու ուրիշի մէջ և ոչ մի իրաւունք՝ ոչ անձնական և ոչ սեպհականութեան:

Սոյնպիսի զգացումներ նրանց մէջ պէտք է զարգանային և այն պատճառով, որ նրանք գտնւած են եղել այն ժամանակեայ պարսկական սովորութիւնների ազդեցութեան տակ, ունեցել են բարոյականութեան վերայ նրանց հայեացքը և առհասարակ եղել են այնպիսի վարք ու բարքի տէր, որ ներկայացել է դեռ Ատրեստանից, Բաբելոնից ու Պարսկաստանից Աղէքսանդր Մակեդոնացու և նրանից յետագայ խառնակ ու ցոփ շրջաններից ժառանգութիւն ստացած:

Ռուսների Երևան գալը թուրքերին նեղ շրջանակի մէջ դրեց. նրանք հարկադրւած էին թողնելու իրանց կենցաղավարութեան նախկին ձևը և սովորելու երկրագործութիւն ու այգեգործութիւն: Այդ նրանց յաջողւեց: Հարստանալով՝ նոքա թօթափեցին իրանցից ռուսների գալու պատճառով վրաներն ընկած երկիւղը, զգացին իրանց ռուս քաղաքացի, միւսների հետ հաւասար իրաւունքի տէր և, ինչպէս իրանց եղբայրակից հայերը, շատ չ'անցաւ, ցոյց

աւելցին իրանց հոգեկան կազմութեան բոլոր հակումները: Արա հետեւանք եղան ահագին քանակութեամբ սպանութիւնները, աւարներն, աւազակութիւններն ու առեւանգութիւնները (կանանց): Թուրքի աչքում ոչինչ տարբերութիւն չը կար մարդ թէ հաւ սպանելու մէջ: Իսկ օտարինը գողանալ—յափշտակելը՝ շատ սովորական երևոյթ է: Առանձնապէս զակաւորող էին հայի ու քրդի ստացւածքի նրանց աչքում քրիստոնեաների ստացւածքից ապօրինաբար օգտուելը մեղք էր, իսկ ստելը քրիստոնէի առաջ, նրան խաբելը—առաքինութիւն էր: Բայց ինձ թւում է, որ ոճիրների խնդրում անհրաժեշտ է զանազանել մեր նահանգի մոնղոլական ծագում ունեցող թուրքերին իրանական, այսինքն՝ թրքացած պարսիկներից, հայերից և քրդերից: Եւ այս վերջիններից շատ կան մեր նահանգում: Նրանք խօսում են քրդերէն, անուանում են իրանց միլլի, զարաշօրլի, շահաբ և այլն, և իրանց բնաւորութեամբ ու հակումներով դէպի ոճիրները առաւել նմանւում են իրանց արմատական ցեղակից հայերին ու պարսիկներին, քան թէ թուրքերին:

Երբորդ խումբը ներկայացնում են քրդերը: Շօպէնի կարծիքով, մեր նահանգի ծայրերը քրդաբնակ է արել Երևանի վերջին խանը, որպէս զի նրանք խանութիւնը հարեւանների յարձակումներից պաշտպանեն: Եւ հէնց իրանց սկզբնական հայրենիքում—Ցաճկաստանում քրդերը միշտ ծառայել են իբրեւ տարականոն զօրք: Այս նրանց կենցաղավարութեան եղանակը խաշնարածութեան հետ միացած՝ առաջացրել է նրանց մէջ ծուլութիւն, աշխատելու անընդունակութիւն, օտարի վաստակով ապրելու հակում:

Քրդերը միշտ եղել են ու են խաշնարածներ և, ինչպէս արիական ծագում ունեցող ժողովուրդ, արիւնարբու չեն. այս պատճառով և նրանց մէջ կատարւում են ստացւածքի դէմ ոճիրներ: Քուրդը սպանել չէ սիրում. այլ նա գող և կողոպտիչ է և այս նրա համար արհեստ, եղանակ է կերակուր հայթհայթելու: Նա չէ կարող ապրել առանց գողութեան ու յափշտակութեան, առանց սնունդ ձարելու այդ անհրաժեշտ եղանակից:

Ցոց տալով ասածս ազգերի իւրաքանչիւրի բնատուր ոճիրները, չեմ կարող և ցոց չը տալ այս ազգութիւնների միմեանց վերայ արած ազդեցութիւնները: Հայը, որ վաղուց դադարել էր գէնք գործ

ածելուց և, ինչպէս թուրքերն են ասում, վախում էր արիւնից, սկսեց թուրքերից օրինակ վերցնել. այս պատճառով էլ սպանութիւնները հայերի մէջ ևս դարձան յաճախական երևոյթներ. թուրքն էլ իւր կողմից սկսեց հայից սովորել ունեցածի դէմ ոճիրներ գործել:

Երևանի մէջ մի խումբ թուրքեր կան, ասում են, որոնք զբաղւած են միայն միմեանց հոգաբարձու, խնամակալ ընտրելով և այսպիսով միմեանց դիւրութիւն են տալիս առաւել հեշտութեամբ կողոպտելու: Ինչ վերաբերում է քրդերին, սրանք, ի շնորհս հացի թանգութեան, շատ արօտատեղեր ցանքերի վերածւելով—մանաւանդ անցած թանգութեան պատճառով—համարեա թէ կորցրեցին իրանց տնտեսական անկախութիւնը և ցրւելով թուրք ու հայ զիւղերում՝ հովիւներ դարձան: Ընդունակ չը լինելով որ և իցէ այլ աշխատանքի, նրանք վարձւում են շնչին գներով և ապրում են մանր-մունր զոգութիւններ անելով: Տնտեսական ճնշւած դրութիւնը ներանց մէջ զարգացնում է նենգամտութիւն, խարդախութիւն և հնարագիտութիւն: Նրանք քիչ-քիչ ընտելանում են սպանութիւններ գործելուն, որ վերջին ժամանակներս նրանցում դարձել է բաւական յաճախական երևոյթ:

Դառնալով ոճիրներ կատարելու եղանակների յատկութիւններին՝ կը նկատեմ, որ թուրքերը մեծ մասամբ ոճիրը գործում են ծածուկ—դարան մտած, գիշերը և միայնակ. հայերը՝ խմբով, բաց տեղում և լոյս ցերեկով. քրդերը՝ խմբով և մի առանձին աղմկալից հարայ-հրոցով: Օրինակի համար, ասենք թէ երեք գիւղ—հայի, թուրքի և քրդի թշնամանում են միմեանց հետ. թուրքերն իրանց թշնամիներից որ և իցէ մէկին դարանից կը տան վեր կը ձգեն կամ մի տեղ, գիշերը մենակ գտնելով, կը քարշեն, կը խեղդեն ու գիակը կը ծածկեն. հայերը գիւղովին կը հաւաքւեն, կ'առնեն հրացանները, թրերը, մահակները և կը յարձակւեն իրանց թշնամիների խաշների վերայ, կը քշեն, կը բերեն իրանց տները կամ սահմանից անցկացնելով կը ծախուեն Պարսկաստանում կամ Տաճկաստանում: Եթէ նրանց յետևից թշնամիները հետամուտ լինին, նրանք սկզբում փախուստ կը տան, յետոյ կը դառնան, կռիւ կը մտնեն: Միայնակ յանցանք կատարելուս ընդհանուր քրդական սովորութիւն է՝ յարձակելու ժամանակ առա-

ջուց իմաց տալ թշնամուն իւր ղիտաւորութիւնը հետեւեալ խօսքերով. «պատրաստելի՛ր, գալիս եմ»:

Մեզանում տարեկան կատարւած ոճիրների թիւը որոշել անկարելի է. բայց մենք առաջ կը բերենք պաշտօնական տւածներից միայն 1886 թ. համար:

Քրէական զանազան ոճիրներ, որոնց առիթով դատ է բացւած, 1226 է եղել. այս թւում 164 սպանութիւն, 70 սպանութեան փորձ, 221 վիրաւորութիւն, 28 յափշտակութիւն կանանց, 133 հրաձգութիւն, 22 ընդդիմութիւն իշխանութեան:

Կարծիք չը կայ, որ այս չէ բոլոր ոճիրների թիւը, որովհետեւ տեղական ազգաբնակչութիւնները սովորաբար ծածկում են յանցանքները: Շատ եղիտներ, զոգութիւններ, հրաձգութիւններ իշխանութեան չեն հաղորդւած, ըստ որում ֆեւստոյն ու չարագործը հաշուում են իրար հետ: Ինձ մի բաւականին ճշմարտաման փաստ են պատմել: Քրդական երկու ցեղ կոււել են իրար հետ, որի հետեւանքը եղել է 10-ից աւելի մարդասպանութիւն: Ինչպէս է լինում, տեղական ոստիկանութիւնն իմանում է այդ և հետամուտ է լինում նոյն իսկ տեղում ոճիրը թարմ բռնելու: Քրդերն էլ իրանց կարգին իմանում են ոստիկանութեան ղիտաւորութիւնը: Նրբ ոստիկանութիւնը ոճիրի կատարւած տեղն է գալիս, գտնում է բոլոր քրդերին միասին նստած և զառներ մորթոտելու: Քրդերը աճապարանօք ղիակները թաղած, եղիտը ծածկած են եղել, իսկ գետնի վերայ թափւած արեան մասին աւել են, որ իրանց տօնի պատճառով շատ մերթաճ զառներիցն է:

Այսպիսի երևոյթ հասկանալի է, որ ունի շատ պատճառներ մեր կեանքի մէջ խորն արմատներ ձգած, և մինչև որ մենք այս պատճառները չը լուսաբանենք, չենք կարող ոչ մի արմատական միջոց գտնել մեր ողջ գոյութեան, մեր երկրի ու ազգութիւնների բնաւորութեան հետ կապւած ոճիրների դէմ մարտնչելու համար. մենք պէտք է վերլուծենք տեղական կեանքը, նորա հիւանդ կողմերը, որոնք և կազմում են մեզ համար այսքան սոսկալի հետեւանքների պատճառները: Մենք պէտք է ցոյց տանք ընկերական չարիքների այն խմբերը, որոնց արդիւնքն են մեր ոճրագործութիւնները, — ուրիշ խօսքերով պէտք է ցոյց տանք ոճիրների շարժառիթները — գործիչները (факторы): Այս գործիչներն են՝

Մեր աշխարհի ցեղական կենցաղավարութիւնը և վրէժխնդրութիւնն՝ իբրև նրա հետևանք, Քրիստոսի և Մահմէդի վարդապետութիւնների վատ մեկնաբանութիւնը, կնոջ ստորադրական վիճակը, տեղային ազնականութեան բնաւորութիւնը, ազգութիւնների փոխադարձ թշնամական չարաբերութիւնները և խորին տգիտութիւնը, ընտրողական սկզբունքը, Պարսկաստանի ու Տաճկաստանի ազդեցութիւնը:

Կրօն: — Գիտնականներից և հրապարակախօսներից շատերն ասում են, որ քրիստոնէութիւնն ու մահմէդականութիւնը, չը նայած իրանց բոլոր սրբութեանը, սխալ մեկնութիւնների շնորհիւ, ոճիրներ են ստեղծում—առաջ բերում:

Ասելով այս քրիստոնէութեան վերաբերմամբ՝ առաջ են բերում հետևեալը. — Քրիստոսի վարդապետութեան հիմնական սկզբունքներից մէկը՝ ուրիշի դործածը ներողամտութեան տալն է: Փրկիչն ասում է. «Եթէ քո մի թշին ապտակ զարկեն, միւսը դէմ արա՛»: Առ Կորնթացիս առաջին թղթում ս. Պողոս առաքեալն ասում է. — «Եւ հէնց այն էլ նւաստացուցի է ձեզ համար, որ դուք միմեանց մէջ երկպառակութիւն ունիք: Ինչո՞ւ ձեզ համար առաւել լաւ չէ մնալ արհամարհւած. ինչո՞ւ ձեզ համար առաւել լաւ չէ կրել զրկանքներ:»

Այս սխալ գաղափարները, ասում են հրապարակախօսները, ժողովրդի մէջ թափանցելով, ստեղծում են այնպիսի տիպեր, որոնք չեն մաքառում իրանց իրաւունքների համար, չեն պաշտպանում իրանք իրանց և այսպիսի վարմունքներով դիւրութիւն են տալիս—հրաւիրում են հասարակութեան միւս չար անդամներին ոճիրներ գործելու:

Այս վերջիններս իրանց դէմ բողոքներ չը տեսնելով, սովորութիւն են դարձնում անարդարութիւններ գործելը, և այսպիսով հասարակութիւնը երկու բանակի է բաժանւում—անարդարութիւն հանդուրժողներ, տանողներ և գործողներ: Այդպէս չէր լինի, ասում են հրապարակախօսները, եթէ իւրաքանչիւր ոք աչքի առաջ ունենար երեւելի Իերինգի խօսքը՝ *կու ի մ էջ կը գտնես քո իրաւունքը*, կամ միւլնոյն է, եթէ հռոմէական սկզբունքին հետևէ՝ *si vis pacem-para bellum*—եթէ սիրում ես խաղաղութիւն՝ պատրաստվիր

պատերազմի: Այն ժամանակ ոճրացիին բնազդունների տէր մարդիկ ընդդիմադրութեան հոտ առնելով, սիրտ չէին անիլ ոճիրներ գործելու:

Եթէ մեր Երևանինահանգի կեանքի մէջ փաստեր որոնենք, այնպիսիները կը գտնենք, որոնք կը հաստատեն սոյն տեսութիւնը: Սրինակ՝ գեօկչեցի ու աբարանցի հայերը, որոնք ընդհանրապէս իսկական քրիստոնեայ են համարուում, կորցրել են իրանց իրաւունքները ճանաչելու և պաշտպանելու ընդունակութիւնները, և միշտ էլ իրանց դրացիների յափշտակիչ յարձակումների առարկայ են. շատ յաճախ դուք կը հանդիպէք նրանց մէջ տանուտէրի կամ հարստի, որ կողոպտում է, անարգում է ամբողջ գիւղը, և այդ տանում են բնակիչներն ասելով, որ նա Աստուծոյ երեսից ընկածի մէկն է, Աստուածանից վախ չ'ունիւ—Ջանն ինձանից—հոգին նրանից: Այս տեղերի մարդկանց այսօրինակ կրաւորական վարմունքը դէպի իրանց իրաւունքները առանձնապէս աչքի է ընկնում, երբ նրանք եալազատեղերում միժուում են արօտատեղերի համար. նրանք միշտ զրկւած են և միշտ քրիստոնէապաշտել համբերութեամբ տանում են զրկանքը: Եւ որքան նրանք համբերող ու տանող են, այնքան էլ նրանց դրացիք՝ յանդուգն ու յանցաւոր:

Այս և սրա նման փաստերը, ըստ երևոյթին, պէտք է մեզ համոզեն գիտնականների վերոյիշեալ հայեացքի մէջ. բայց հարկաւոր է ասել, որ այսպիսի երևոյթների պատճառը նաև ուրիշ ընկերական գործիչներ են, ինչպէս օրինակ՝ գէնք բանացնելու սովորութեան կորցնելը, տեղադրութիւնը, բնակիչների պատմութիւնը և այլն:

Մահմեդականութիւնն, ասում են եւրոպական գիտնականները, հետզհետէ պատերազմ և ոճիրներ է առաջ բերում:

Իրանց հայեացքն ապացուցանելու համար, եւրոպական գիտնականները դիմում են զուրանի և մուսուլման իրաւագէտների հետեւեալ տեղերին.

Իսլամն, ասում է Բերեօզին, սուր կերպով բաժանում է մուսուլման աշխարհը (գար-էլ-իսլամ) անհաւատների աշխարհից (գար-էլ-իսարբ) և վերջիններիս դէմ Մահմէդի ժամանակից քարոզում է ջէհաթ կամ հազո՛վատ—պատերազմ անհաւատների հետ: Ձէհաթի հիմքը հետեւեալ կանոնն է զուրանի.

«Որպէս զի թշաւութիւններ չը լինին, սպանեցէ՛ք բոլոր հե-

թանոսներին և սպանեցէ՛ք այն ամենին, որոնք չեն հաւատում Աստուծուն և վերջին դատաստանին»:

Իլրութիւն սրա՝ թ. զլիտում, 39 պարբերութեան մէջ գտնում ենք. «Եթէ դուք չը գնաք պատերազմի, Աստուած կը պատժի ձեզ ծանրագին պատժով: Մահմէդ—Ալիի շարադրութիւնների վերաբերմամբ Դուր-ուլ-Մուխտարի քննական գրաւածների մէջ ասուած է.

«Թող է տրուում վերցնելու—կրելու անհաւատների պատերազմների մէջ ընկաւծների զլխները՝ թէ վրէժխնդրութեան յագուրդ տալու և թէ անհաւատների կատաղութիւնը բորբոքելու համար»: Նոյն տեղում—

«Անհաւատների գերեզմանները թողատրելի է բանալ՝ նրանց մէջ թաղած գանձերը հանելու նպատակով: Արդելում է որդուն իւր անհաւատ հօրն սպանելու, որին նա (որդին) պէտք է այնպէս անի, որ ուրիշի ձեռքով սպանւած լինի»:

Որովհետեւ կանանց ու մանուկներին արգելւում է սպանել, այս պատճառով նրանց, որոնց անհնար է դար-էլ-իսլամ ուղարկելու, պէտք է ձգել, թողնել անսպառ տեղերում, որ նրանք քաղցից ու ծարաւից մեռնեն:

Սակայն դիտնականների աչսալիսի ենթադրութիւնների հակառակն խօսող փաստեր ևս կան: Մահմէդը խիստ տարբերում է քրիստոնեաներին հեթանոսներից, որոնք չեն հաւատում ոչ Աստուծուն և ոչ վերջին օրին», և որոնց դէմ էլ նա քարոզում է անողորմ պատերազմ: Բացի դրանից ինքը մարգարէն երբէք չէ քարոզել այնպիսի զազանութիւններ, որոնց օրինակները մենք բերինք Դուր-ուլ-Մուխտարից: Ընդհակառակը՝ ղուրանում—բ. զլ. 186 պարբերութեան մէջ՝ մարգարէն ասում է.

«Պատերազմեցէ՛ք Աստուծոյ ձանապարհի վերայ նրանց դէմ, որոնք յարձակւում են ձեզ վերայ. բայց մի՛ վարէք անարդար, առաջինը դուք յարձակելով նրանց վերայ. ըստ որում Աստուծուն հաճելի չէ անարդարութիւնը»:

Մի քանիսն ասում են, որ ղուրանից առաջ բերած կտորը պարզ կերպով ցոյց է տալիս, որ ջէհաթը այն ձեռով, որ նա է ներկայանում, ամենին ղուրանի խիական միտքը հասկանալու արդիւնք չէ, այլ այն չը հասկանալու արդիւնք է:

Միևնոյն բանը հանդիպել է և քրիստոնէութեանը միջին դարերում:

«Փոխանակ, ասում է այդ առիթով Կիտեակովսկին, քրէական իրաւագիտութեան նորոգական սկզբունքներ ներկայացնող իւր այն հիմնադրի հեղութեանն ու դժաստութեանը հետեւելու, միջնադարեան եկեղեցին զիմել է մի այլ աղբիւրի, աղբիւրի՝ վրէժխնդրութեան, սնոտիապաշտութեան և աններողամտութեան ոգով տոգորւած աղբիւրի, քրիստոնէական կրօնի Հիմնադրի վարդապետութեան սուր հակառակութիւնը կազմող»:

Գիտնական կանոնիկոսների գրւածներից կարելի է մեծաթիւ օրինակներ բերել, որոնք իրանց դաժանութեամբ յետ չեն մնալ Գուր-ուլ-Մուխտարից վերելք բերւածներից:

Խօսելով ապաստանի իրաւունքի մասին, Կլարը մերժում է այն հրէաներին, Քրիստոսի հաւատադրութ թշնամիներին, որոնց չը պէտք է որ և իցէ մարդասիրութիւն ցոյց տրւի:

Քրիստոնէութեան ու մահմեդականութեան հիմնական սկզբունքները մասամբ ոճիրներ առթելու խնդրում՝ պէտք է առանձին ուշադրութիւն դարձնել նրանց մեկնաբանելու վերայ:

Բանը նրանումն է, որ ինչպէս քրիստոնէութիւնն, այնպէս և մահմեդականութիւնը վատ են հասկանում նրանց վարդապետները—մեկնիչները: Կարծիք չը կայ, որ հայ քահանաներից, մահմեդական ախուռներից շատերը, իրանց կրթութեան այսպիսի վիճակում, չեն կարող աստուածային վարդապետութեան մտքերը հասկանալ: Փրկչի վարդապետութիւնն իւր Ֆիլոսոֆիայական բոլոր խորութեամբ և յաւիտենական ճշմարտութեամբ երբէք չի կարող լիովին ըմբռնելի լինել անզարգացած, նանիր փառասիրութեան անձնատուր եղած հոգեւորականին:

1879 թւականին, երբ մեղանում սով էր, քրդերը քաղցած ու մերկ դիմում էին հայ գիւղերը և խնամւում: Մի տօն օր, իրանց սովորութեան համեմատ, հայերը գերեզմանօրհնէք գնալով, այնտեղ հացեր էին բաժանում աղքատներին: Գերեզմանատներից մէկին մօտեւում են և այդ քուրդ աղքատները: Տեղական հայ քահանան, առանց երկար մտածելու, վռնելում է նրանց ասելով, որ նրանք սրբապղծում են գերեզմանները: Լաւ էր, որ գիւղացի ծերունիներից

մի քանիսը, նրանց յետևից՝ զնալով, կերակրեցին այն ողորմելի քաղցած-ներին: Մեզանում կային մօլլաներ, որոնք՝ սուտ վկաներով շահում էին խախտած տիրապետութեան վերականգման վերաբերեալ դատերը՝ տեղեկութիւններ ժողովելով: Հայ գիւղացիներին պատկանած հողերի սեպհականութեան իրաւացիութեան մասին: Մի մօլլա պատմում էր, որ իւրաքանչիւր մի քրիստոնեայ սպանելու համար Տէր Աստուածն այն աշխարհում ուղղադաւանին կը շնորհի 2.000 հրեշտականման հուրիներ, իսկ քրիստոնէութեան պղծելու համար՝ անթիւ անհամար հուրիներ և նոյն քրիստոնէութեան: Մօլլայի մէկը քարոզում էր՝ սպանել նշանաւոր և լաւ կարողութեան տէր հայերին, ասելով՝ որ այդ անհրաժեշտ է քրիստոնէութիւնը տկարացնելու և իսլամը զօրացնելու համար:

Յեղահան կենցաղ: Մեզանում ոճիրների գործիչներից մէկն էլ ցեղական կենցաղն է կամ ցեղական կենցաղի մնացորդները: Յեղասուածը ընկերավարական այնպիսի միութիւն է, որի անդամները կապած են միմեանց հետ ազգակցութեամբ ու շահերով: Յեղական կենցաղը ազգերի պատմութեան մէջ միայն այն ժամանակ է երևան գալիս, երբ նրանք բարձր են կանգնած ընտանեկան իրաւա-յարաբերութիւնից, բաց տակաւին չեն հասած պետական իրաւա-յարաբերութեան: Զարգացման այս աստիճանի վերայ մարդը անձնատուր է իւր ցեղի շահերին, պարտաւոր է պաշտպանել իւր ցեղակիցներին և, ուր պէտք է, պատերազմ մղել իւր ցեղակիցների թշնամիների դէմ: Բայց որովհետև ուր կայ ցեղական կենցաղ, այնտեղից էլ միշտ անպակաս են թշնամանքն ու կռիւները, ուստի սրանից հետևում է, որ ցեղական կենցաղավարութիւնը պարտաւորապէս առթելու է և առաւել ոճիրներ:

Յեղական կենցաղավարութեանը յատուկ է արիւնով վրէժխնդրութիւնը, որի համաձայն ցեղի իւրաքանչիւր մի անդամի վերայ պարտաւորութիւն է դնում՝ վրէժ առնել իւր ցեղակիցներին տաճ բոլորատեսակ վիրաւորանքների փոխանակ: Այս վրէժը լուծելու ցեղի իւրաքանչիւր անդամին դրդում է, այսպէս կոչւած թասիրը: Թասիր քաշ — նախանձայոց — վրիժառու — սա մեր նահանգի մէջ ամենալաւ ածականն է, որ կարելի է տալ տղամարդին: Մեր արիւնով վրէժխնդրութիւնը նկատել ու նկարագրել է մեր նա-

Հանգի զրականութեան հայր հանգուցեալ Շօպէնը: Նկարագրելով Սարգարի ժամանակները, ահա՛ թէ ինչ է ասում նա.

«Քրէական իրաւարանն առաջնորդում է շատ պարզ օրէնքներով՝ արիւնը փոխանակ արեան նրանց հիմունքն է եղել: Սպանողին տալիս էին ապանւածի մօտ ազգականների ձեռքը և վերջիններս իրաւունք ունէին կամ նրանից արեան զին—փրկանք առնելու կամ նրան կեանքից զրկելու»:

Վրէժն այն աստիճան կարեւոր կենսական տարր է քաղաքակրթութեան յայտնի աստիճանի վերայ, որ բանաստեղծները նրան մարդու համար ամենաթանկագին բաներին են հասցնում: Այսպէս օրինակ՝ Պուշկինի «Պօլտավա»-ի մէջ Կօչուբէյն է ասում.—

Այսպէս սրխալեւ չէք դուք՝ երեք զանձ
Այս կեանքում էին իմ բերկրանքը.—
Իմ պատիւն էր իմ առաջին զանձ,
Եւ այդ զանձը ինձնից կորդեց տանջանքը:
Իսկ զանձը երկրորդ՝ էր անդառնալի
Դրստեր պատիւն իմ յոյժոյժ անձկալի,
Գիշեր և ցերեկ զողում էի վրան —
Այդ զանձը ինձնից խլեց Մազեպան,
Բայց պահել եմ ես իմ զանձը վերջնական.
Երրորդ այն զանձըս՝ վրէժս է սըրբազան,
Որով պատրաստ եմ գընալ առ Աստուած...

Իսկ շատ ուրիշները, ինչպէս օրինակ՝ դարվիշները, որ ահագին ազդեցութիւն ունին ժողովրդի վերայ, վրէժն աստուածային յատկութիւն են դարձնում: Պրօֆէսոր Վամբէրին առաջ է բերում Աստուծոյ եօթ յատկութիւնը, որոնք դարվիշների մի քանի ուխտերը օրը մի քանի անգամ պարտաւոր են արտասանելու, և այս յատկութիւններից մէկն էլ՝ վրէժխնդրութիւնն է: Ահա՛ նրանք.

«Զը կայ այլ Աստուած, բացի Ալլահից,
Ո՛վ Աստուած.
Նա մի է և ուրիշ ոչ ոք.

Ո՛վ արդար

Ո՛վ կենսունակ կենա՛հրաշ-անմահ—

Ո՛վ կատարեալ

Ո՛վ վրէժխնդիրս»

Մեզանում—երևանի՛նահանգում—եթէ լաւ ներս թափանցենք կեանքի մէջ, կը տեսնենք, որ իսկապէս ցեղական կենցաղավարութիւն չը կայ, ինչպէս որ այդ հասկանում են պտտմաբաններն ու իրաւաբանները. բայց առանց սխալելու կարելի է ասել, որ մենք գտնուում ենք ցեղական կենցաղավարութիւնից պետականին անցնելու անցողական շրջանի մէջ: Բնկերական այս աստիճանի զարգացման շնորհիւ, մեր նահանգի ստորին դասակարգի դաղափարները մեծ մասամբ պտոյտ են առնում ցեղական հասկացողութիւնների շրջանում: Այս հասկանալի անելու համար, օրինակ բերենք: Ենթադրենք թէ մի որ և իցէ գիւղում սպանութիւն է կատարւել: Չարագործի ազգականները չեն նայում այդ երևոյթի վերայ պետական սկզբունքների տեսակէտից, այսինքն՝ չեն նայում իրանց ազգականի վերայ իբրև պետութեան առհասարակ փնասակար անդամի վերայ. նրանք նայում են նրա վերայ ցեղական հասկացողութիւնների տեսակէտից, պաշտպանում են այդ չարագործին, ինքեանք սկսում են թշնամանալ հակառակ կողմի հետ և սրանից առաջանում են անհամար ոճիրներ:

«Կովկասեան լեռնացիների Աղաթնեռում» պրօֆէսոր Լէօնտովիչը այս խնդրի վերաբերմամբ բերում է այնպիսի բնատուր օրինակներ, որ կարծես մեր կեանքից լինին վերցրած:

Բնիկը մի սպանութիւն կատարելով—ամենատեսակ հնարներ է գործ դնում, որ վրէժից ազատւի կամ որ իւր ազգականի արեան փոխարէն թափի երկու—երեք և, որքան կարելի է, շատ մարդու արիւն:

Բորբոքւած արիւնխնդիրը չէ որոնում ցեղակցութեան աստիճաններ թշնամի և ատելի ազգատոհմի անդամների մէջ.—նա շատ աշդամ սպանում է սպանիչի ամենահեռու ազգականին, ով որ ընկնի նրա քինացող սրի տակ: Մինչև անգամ պատահում է, որ սպանւածի ազգականները՝ կուրացած մոլեգին թշնամութեամբ դէպի իրանց արիւնխնդիրները և աչքները մթնացրած թափւած ա-

րիւնով—սպանում են բոլորովին անմեղ մի մարդու, սխալմամբ սպանիչի ազգականների տեղը զննելով նրան: Այսպիսով արեամբ վրէժխնդրութիւնը հարածի տակ է ձգում սպանիչի ամենահեռու ազգականներին անգամ և կողմնակիներին.— երկու գերդաստանի քիւնախնդրութիւնից ծագում է երեք տոհմի թշնամութիւն:

Նստո անգամ սպանածի ազգականները, վրէժ առնելուց յետոյ, հալածւում են վրէժ առնածի ազգականների կողմից այն հիման վերայ, որ մինը միւսից առաւել լաւ, առաւել քաջ, պատւաւոր էր սպանել, որ առաջինի կեանքը երկրորդինից առաւել թանգ է եղել և այլ այս տեսակ պատուական: Նրկու կողմից էլ լինում են մի քանի գոհեր. արեամբ վրէժխնդրութիւնը ամբողջ սերունդների է անցնում:

Նւ այսպէս մեզանում կան պատմական անցողականութիւն, ցեղային կենցաղավարութիւն, և նրանց հետ միասին վրէժ, որոնք և ոճիրների զործիչներին մէկն են կազմում:

Ոճիրների երրորդ զործիչ Նրեանի նահանգում կարելի է համարել կնոջ բոլորովին ստորադրական վիճակը: Արեւելքում կնոջ դրութեան մասին շատերն են զրկւ. այնպէս որ այս առիթով աւելորդ է իմ կողմից խօսք ասելը, միայն ես առաջ կը բերեմ ընտանեկան կեանքի ազդեցութիւնն արեւելքում ոճիրների վերաբերմամբ: Ահա՛ թէ ինչպէս է նկարագրում այն պրօֆէսոր Վամբէրին.

«Նթէ խորագնին կերպով ներս թափանցելով արեւելեան ընտանեկան կենցաղավարութեան մէջ մենք կազմենք նրա ընդհանուր պատկերը, վրան կը նկատենք հետեւեալ— առանձնապէս եւրոպացու աչքին ընկնող -- զծերը: Նախ՝ եւրոպացին արեւելքում ոչ մի տեղ չի գտնիլ այն սերտ կենակցութիւնը, այն մտերիմ բարեկամութիւնը և սէրը, որոնք ընտանիքի էական բնաւորութիւնն են կազմում: Բաժանականութիւնն ու ներքին աններդաշնակութիւնը, ինչպէս սառցային թելեր անցնում են մահաճգնական կենցաղի ամբողջ հիւսածքի միջով. ամեն ինչ կարկամում է նրանց ազդեցութեան տակ, նոյն իսկ ընտանեկան շէնքը թւում է երերուն: Քանի որ մարդ և կին օրւայ մեծ մասն անցնում են առանձնակի, այդ պատճառով նրանք ոչ միայն իրար հետ չեն բաժանում ուրախութիւնն ու վիշտը, ոչ միայն կեանքի մէջ միմեանց

նեցուկ և օգնական չեն, այլ և տան մէջ երկու կուսակցութիւն են կազմում, որոնց կրօնական ու քաղաքացիական օրէնքը անջրպետել է մի բարձր պատով և որոնք, եթէ բոլոր սրտով ցանկանան էլ, չեն կարող միանալ ու միենոյն նպատակին ձգտել: Դրանից յետոյ — շարունակում է Վամբէրի — ոչ միայն մահմեդականների մէջ, այլ և ամբողջ արեւելքում ապշեցուցիչ է որդոց յարաբերութիւնը դէպի ծրնողները, որոնք հիմնւած են առաւել յարգանքի քան թէ սիրոյ վերայ: Նոյն իսկ երեսահանց դիտելու երեւում է, որ այստեղ սառը սովորութիւնն է տիրում և ոչ սէրը, որովհետեւ վերոյիշեալ յարգանքը ցոյց է տրւում հօրը և ոչ մօրը:

Վամբէրիի առաջ բերած խօսքերը զրկում են արեւելեան ընտանիքը սիրուց, ոճրագործութեանը ընդդիմադրող այդ գլխաւոր ուժից: Այս սէրը ինչպէս ծնողաց, այդպէս էլ որդոց մէջ ոչ միայն չէ զարգանում, այլև ճնշւում, սեղմւում է: Եթէ մենք սրա հետ միասին աչքի առաջ ունենանք, որ այս ամենը ազդում են հոգեկան կազմութեան վերայ, ուր և առաջ է բերում մի յայտնի անկառարութիւն, որը ժառանգաբար անցնում է դարուց դար և զօրեղանում է, այն ժամանակ մեզ համար պարզ կը լինի թէ ինչո՞ւ արեւելցին այնքան դադանաբարոյ է, քնքշութիւնից զուրկ և աւելի հակւած է ոճիրներ գործելու անձնաւորութեան դէմ: Բացի այս բոլորից, բնական է հէնց այն հանգամանքը, որ արեւելցի տղամարդը միշտ զգում է թէ կինը իրան հաւատար արարած չէ, ուստի և շատ յաճախ ընդոտնում է նրա իրաւունքները: Իւր տան մէջ մի անձի իրաւունքներ ընդոտնելը դառնում է նրա համար սովորութիւն և ձգտում է նոյնը իրականացնել և արտաքոյ իւր տան՝ ուրիշների վերաբերմամբ ևս: Ահա՛ ձեզ ոճրագործութեան հիմքը: Ուրիշ կողմից արեւելցի կինը գլխովին ստորադրական, սարուկ, ճնշւած, իրաւազուրկ մի արարած, զրկւած ազատ կամքից և կախւած ամբողջապէս իւր պարոնի իրաւունքից, ինչպէս նկարագրում են նրան եւրոպացի գիտնականները, կորցնում է անկեղծօրէն անձնատուր լինելու ընդունակութիւնը, դադարում է հասարակութեան մէջ բարոյական տարր լինելուց, դառնում է խորամանկ, դադտամիտ, նենգ, և պատրաստ շատ ոճիրներ գործելու:

Նւ այսպէս արեւելեան ընտանիքը մի կողմից՝ ճնշւում է մարդու

այն զգացումներն ու հակումներն, որոնք ոճրագործութեան ընդ-
գիմադրող տարրերն են կազմում, իսկ միւս կողմից՝ զարգացնում է
ոճիւրների շատացնող զգացումները ու հակումները և հանդիսանում
է Երևանի նահանգում ոճրագործութեան գլխաւոր գործիչնե-
րից մէկն:

Նոյն իսկ այս գործիչի կարգում թոյլ եմ տալիս ինձ դասե-
լու այն նշանաւոր երեւոյթի մեկնութիւնը, որ Երևանի նահան-
գում սպանութիւնների մեծ մասը կատարւում է կնոջ պատճառով:
Կրթւած մարդու համար այսպիսի երեւոյթը գրեթէ անհաս-
կանալի է: Որպիսի՞ հոգեկան յօրինւածքի տէր են մեր զիւղացիք,
որպիսի՞ անմիտ կրքերի տէր, ի՞նչ մի անհրաժեշտութիւն կայ սպա-
նելու մի կին, որ յափշտակել, գրաւել է, կամ սպանելու նրան, որ
յափշտակել, գրաւել է նրան. — ահա՛ ինդիւրներ, որոնք մատչելի չեն
հասկացողութեան ու ճիշդ հետազօտութեան:

«Լեռնացիների մէջ արիւնական գործերին վերաբերում են —
ասում է պրօֆէսոր Լէօնտովիչ — ա. սպանութիւնը, բ. վիրաւորու-
թիւնը, գ. բռնաբարութիւնը, դ. կնոջ կողմից ամուսնական հաւա-
տարմութեան դրժելը և ե. կին ու հարսներ փախցնելը: Այս գոր-
ծերը բնիկների մէջ ամենազօրեղ կերպով զրգւում — բորբոքում են
կրքերը, մթնացնում են նրանց տաք գլխները և դրդում են բնիկնե-
րին ամենակատաղի արիւնշաղախ ոճրագործութեան:»

Որպէս զի ցոյց տամ թէ յանցաւորութեան վերայ որքան սաս-
տիկ ազդում է այս նախանձոտութիւնը և թէ որպիսի արիւնաներկ
տեսարանների պատճառ է հանդիսանում, ես կը բերեմ մի քանի
օրինակներ:

Երևանից ոչ հեռու, մի հայ գիւղում, մի հայր, տեսնելով որ
իւր 18-ամեայ, գիւղի մէջ ամենահամեստ հռչակւած աղջիկը համ-
բուրւում է իւր սիրած երիտասարդի հետ, որին և նա կամենում
էր ամուսին լինել, յարձակւում է աղջկայ վերայ, դաշոյնի մի քանի
հարւածներ է տալիս և բուռը բուռը արիւնը խմում:

Մօտ ժամանակներումս մերձակայ թուրք գիւղերից մէկում
քսանամեայ որդին՝ տեղեկանալով որ իւր մայրը դրացիներից մէկի
հետ սիրային հաղորդակցութեան մէջ է՝ ատրճանակի հարւածով
սպանում է մօրը:

Մի քուրդ, որին կինը հաղորդում է թէ իրանց զբաղմունքներից մէկը շար նպատակով հետամուտ է լինում իրան, խորհուրդ է տալիս կնոջը հրաւիրել նրան իրանց գոմը. և երբ մեր վահանակիր Ն.Է.Լ. լովէլասը, ենթադրելով, որ հասած է նպատակին, մոռնում է գոմը, նրան բռնում է իւր սիրեկանի մարդը, կտրում է նրա երկու ա-
կանջը և քթի ծայրը: Դէ հիմի հրամեցէք ու ցոյց տւէք թէ ի՞նչ
կը նշանակի կնոջ բամակից ընկնելը:

Ընդհանրապէս խառնակեցութիւնը, կամ կին ու հարս փախց-
նելը պատճառում է արիւնքամ թշնամանքներ ընտանիքների, ցե-
ղերի, գիւղերի, յաճախ մինչև անգամ մի քանի զիւղերի մէջ.
թշնամանքներ, որոնք անցնում են սերնդէ սերունդ. և այս առիթով
կատարւած յանցագործութիւնները մեզանում զովաբանւում են եր-
գերի մէջ, իբրև օրինակ են կացուցանւում ամենուրեք և ամենքի
կողմից հաւանութիւն են դառնում: Այսպիսի զգացմունքներ և յարա-
բերութիւններ են տեղական ազգաբնակչութիւնների մէջ սնւել դարերի
ընթացքում, որոնք և ունեցել են, ի միջի այլոց, հետևեալ հի-
մունքները.

1) Մեր նախահայրերի ցեղական կենցաղավարութեան մէջ իւր
ցեղի մէջ օտարի արիւն ունենալը համարւել է անարդանք — լլկանք
օջախի սրբութեան, աստուածութեան, և ծառայել է իբրև ամբողջ
տոհմը ստորացնող մի փաստ:

2) Ցեղական սովորութիւնների կենաց զիւցազնական շրջանում,
երբ ամուսնանալը մեծ մասամբ պայմանաւորւած էր կին փախցնե-
լու մէջ, մարդից բռնի կերպով կամ flagranti կինը խլելը համար-
ւել էր նրա կողմից մարդի, տղամարդի արժանաւորութիւն չը ճա-
նաչել:

Այս երկու տարրը մեր նախահայրերից անցել են մեզ և
զարգացել, մեր արեան մէջ են մտել և մեզ տանում են դէպի այն-
պիսի ծանր ոճիրներ գործելուն:

Յանցանքների շորթորդ գործիչ կարելի է համարել՝ տեղական
ազնւականութեան բնաւորութիւնն ու դրութիւնը:

Նա ծագում է պարսկական խաներից, բէկերից, հայ մելիքնե-
րից և այս դասակարգի զբաղմունքներից ու սպասաւորողներից, որոնք
իրանք իրանց նորեկ ռուսներին ցոյց տւին իբրև ազնւականներ,

Ռուսաստանում երկարամեալ ծառայութիւնով ազնւականութեան հասած աստիճանաւորներէր: Մեզանում ազնւականները մեծ մասամբ և հողատէրեր էին, կենում էին ամեն տեղ, իրանք չէին վաստակում և հանդիսանում էին մեր հասարակութեան սպառող դասակարգը: Նրանք մօտ լինելով ժողովրդին, տոհմական անցեալ և հողային սեպակներով թիւն ունենալով, իրանց անձնական նպատակներէ համար՝ կուսացնում էին իրար հետ ընտանիքներ, ցեղեր ու զիւղեր և պզտոր ջրում՝ ձուկ են բռնում: Գիւղի մէջ եթէ ազնւականըն ազգեցիկ էր, մի բռնեցք էր զիւղացիների զլխին, անառակ էր, աւագաններ պահող էր, որոց և կաշառում, յորդորում էր ոճիրներ գործելու: Նրանք զիւղացիներին հաւատացնում էին, որ դատաստանական ու վարչական իշխանութիւնների բոլոր ներկայացուցիչները իրանց խօսքին լսում են և նրանց — զիւղացիներին զայթակղութեան մէջ էին ձգում: — Նրեք զիւղացի դատում են մարդասպանութեան մէջ մեղադրելու համար: Գործի վճռելու օրը զալիս է և նրանց դրացին ինքը — բաւական ազգեցիկ ազնւական մէկը: Գործը մեծ գործ էր. մի քանի ընդհատումներ տեղի ունեցան, և ամեն մի ընդհատումի միջոցին նկատում էր, որ այդ ազնւականը մտնում էր դատարանի գրասենեակը, խօսակցութիւն էր բաց անում մէկնումէկի հետ և, վերադառնալով կալանաւորների ազգականների մօտ, ինչ որ բաներ էր նրանց տաք տաք պատմում: Վերջապէս երբ դատաւորները մտան խորհրդարանը, նա փութաց դէպի փաստաբանները, նրանց հաչեացքներով հարցրեց գործի ելքի մասին և կրկին դառնալով զիւղացիների մօտ՝ հաւատացնում էր նրանց, թէ ինքը մտաւ խորհրդարանը, խօսեց դատաւորների հետ, որոնք բոլորն էլ իւր կողմն են, միայն դատախազն էր չափից դուրս պնդում: Ինչքան զարմացան զիւղացիք, երբ դատարանը յայտնեց այնպիսի մի վճիռ, որ բոլորովին նման էր ազնւականի ասածներին:

Սոյնպիսի վարմունքներով այդ ազնւականները ազգեցութիւն ու ձայն են ձեռք բերում ժողովրդի մէջ, հարստահարում են նրան և մեծ ոճիրների պատճառ են դառնում:

Ընդհանրապէս կարելի է ասել, որ զիւղերում ապրող մեր նահանգի ազնւականութեան մեծ մասը միմեանց հետ կապւած են

ազգականական կապերով և շատ անգամ աւազակների խմբեր են պահում ու նրանց ապաստանարան տալիս:

Մանաւանդ ֆնասակար է աղքատացած ազնւականը, որը սովոր է աշխատելու և որին ազնւական ինքնասաւանդութիւնը թող չի տալիս մօտենալու արհամարհելի աշխատանքին: Նա ապրում է միայն զոդութեամբ և սուտ վկայութիւններ տալով:

Ազնւականութեան ներգործութեան տակ առաւել ևս ոճիրների թիւը շատանում են վերջին տաս տարիներում, երբ սխւեց մեր նահանգի հողաչափութիւնը: Ազնւականները յայտնում են իրանց իրաւունքները թագաւորական հողերի վերայ, որի համար և նշանակում է քննութիւն. և ահա ազնւականները փողով, հողով կաշառում են գիւղացիներին, որոնք և սուտ ցուցմունքներ են տալիս: Նոյն կաշառքներն են շարժում և տիրապետութեան խանգարման վերականգնելու գործերի վերաբերմամբ:

Ի շնորհս ազնւականների գործած այս յանցանքները ինձ չընչին են թւում համեմատաբար նրանց հետ, որոնք սկսում են երեւան գալ և, ըստ երևոյթին, ժամանակով ահագին ծաւալ են ստանալու: Բանը նրանումն է, որ մեզանում գանձարանից հողեր խլելը հաւասար է գիւղացիներից հողեր խլելուն, քանի որ այն հողերի օգուտը գիւղացին էր քաղում: Շատ յաճախ յաջողում է ազնւականներին դարձնել զուտ թագաւորական հողերը կալածատիրական, մուլքադարականները -- բացարձակ սեպհական. յաջողում է յափըշտակել հարիւրաւոր դեսեսաին հերկելի դաշտերից և ամբողջ գիւղեր մուրացկանութեան մատնել: Հասկանալի բան է, որ այսպիսի վարմունքները ժողովրդի մէջ ծնեցնում են թշնամական զգացումներ դէպի ազնւականը, զգացումներ, որոնք կարող են հասցնել անհամար ոճիրների: Բացի սրանից, երբ ազնւականին յաջողում է բացառիկ սեպհականութեան իրաւունքով հողեր ձեռք բերել, նրան շատ անգամ անհրաժեշտ է, որ խլի այդ սկզբնական շահուղներից և յանձնի դրացի գիւղացիների ձեռքը: Այս զարհուրելի թշնամութիւն է ներս բերում գիւղերի մէջ և առաջացնում է ահագին ոճիրներ:

Երբ ես գրում էի այս տողերը, ինձ հաղորդեցին, որ Շարուր-Դարալագեաղի գաւառում, ազնւականների յորդորմամբ, սպանել է

մի զիւղացի, որ պայքար էր մտել նրանց թագաւորական հողեր յափշտակելու դէմ:

Նստ ժամանակ կը պահանջէր՝ հաշուելու համար աղնականների բոլորատեսակ ազդեցութիւնները ոճրագործութեան քանակութեան վերաբերմամբ, մանաւանդ որ յաճախ նրանք ազդում են տեղացի ազգաբնակչութեան բարոյականութեան և կենցաղային կողմերի վերայ. — աչսպէս օրինակ՝ նւազացնում են ժողովրդի կրօնական զգացումները, տարածում են արբեցողութիւն, աւերում են նահապետական առաքինութիւնը և այլն, իսկ այս ամենի արդիւնքը՝ յանցանքներ են: Առ հասարակ կարելի է ասել, որ Երեւանի նահանգի աղնականութիւնը յետամնաց է եւրոպական Ռուսաստանի ու Վրաստանի աղնականներից և հանդիսանում է մեզանում ոճիրների բաւական նշանաւոր գործիչ:

Հին դեր ուրիշ գործիչ ոճիրների կարելի է համարել մեր նահանգի մէջ տանուտէրներ ու ջրպետներ ընտրելու սկզբունքը: Կարծիք չը կայ, որ այս սկզբունքը մեր նահանգում անձնականութեան զարգանալու զրաւականն է, բայց և այսու ամենայնիւ նա անթիւ ոճիրներ է առթում, քանի որ անհամապատասխան է տեղական ազդութիւնների սովորութիւններին: Բանը նրանումն է, որ զիւղերում իւրաքանչիւր կուսակցութիւն կամենում է իւր միջից ընտրել տանուտէր ու շինական դատաւորներ: Սրանից թշնամութիւն է ծագում կուսակցութիւնների ու ընտանիքների մէջ, և այս թշնամութիւնն էլ իւր հերթին առիթ է տալիս անթիւ ոճիրների: Նոյն իսկ տանուտէրներն ու ջրպետներն իրանք անհամար ոճիրներ են հնարում, որ պատժեն իրանց թշնամիներին:

Ոճիրների վեց երորդ գործիչ կարելի է հաշուել մեր դրացիութիւնը Տաճկաստանի ու Պարսկաստանի՝ այդ թմրութեան պետութիւնների հետ: Կարծիք չը կայ նրանում, որ Երեւանի նահանգի հայերը, թուրքերը ու քրդերը վերջին 60 տարւան մէջ, իրանց պարսկաստանցի ու տաճկաստանցի եղբայրակիցների համեմատութեամբ, նշանաւոր կերպով յառաջ են գնացել քաղաքակրթութեան մէջ, հետզհետէ նրանց հակումներն էլ դէպի յայտնի ոճիրները նւազել են: Այդ չէ կարելի ասել պարսկական ու տաճկական բնակիչների վերաբերութեամբ, որոնք այժմ գտնւում են միևնոյն

դրութեան մէջ, ինչպէս որ էին սրանից 200 տարի առաջ: Ինկատի ունենալով, որ արհեստագիտութիւնը մեզանում բարձր է, փողի շրջադարձութիւնը առաւել լաւ, Տաճկաստանի ու Պարսկաստանի բնակիչները զալիս են մեզ մօտ՝ ինչպէս բանուորներ, ինչպէս մանր առևտրականներ և բերում են դէպի մեզ իրանց ոճրալին հակումները: Մեր դաժան արիւնարբուներից շատերը Տաճկաստանի ու Պարսկաստանի զաղթականներ են: Նրանք մեր կողմերում ոճիրներ կատարելով՝ փախչում, ծածկւում են իրանց հայրենիքում, ուր որ ծածկւում են և մեր աւագակներից շատ ուրիշները: Տաճկաստանի ու Պարսկաստանի շատ փաշաների, բէկերի ու խաների համար ապաստանապահութիւնը բաւական շահաբեր է: Նաո շատ անգամ երաշխաւորութեամբ բանտից ազատւած ոճրագործները դիմում են փաստաբաններին և խորհուրդ են հարցնում. — մնա՞ն արդեօք այստեղ, թէ փախչեն Պարսկաստան կամ Տաճկաստան: Փաստաբանը նրանց կարծիքով պէտք է մեղադրանքների դժւարութիւնները ծանր ու թեթեւանի և նրանց պատասխան տալ: Բացի այս ամենից, պարսկահպատակները և տաճկահպատակները, ինչպէս և չինական կուլիները Ամերիկացում, բաւականանում են շատ քշով, զրկում են տեղական բանուոր բնակիչներին, որոնք աւելի կարիքներ ու աշխատանքներ ունին, յետոյ մեզանում ամուսնանում են, հպատակութիւն են ընդունում և այսպիսով աւելացնում են առանց այն էլ խիտ բնակութեան թիւը, որ և լինում է պատճառ ոճիրների բազմանալուն:

Ոճիրների ամենազօրեղ գործիչներից մէկը մեզանում հացերի ու թուրքերի թշնամութիւնն է միմեանց հետ, որը, թէև ոչ այնքան, ինչպէս առաջ էր, մինչև այժմ երբեմն տեղի է ունենում նրանց յարաբերութիւնների մէջ: Այս թշնամութիւնը խոր արմատներ ունի և պահանջում է լուրջ մաքառումն իւր դէմ: Տեղացի ազգաբնակչութիւնը տակաւին քաղաքակրթութեան այն աստիճանից վեր չէ բարձրացել, ուր թշնամին և օտարականը համանիշ հասկացողութիւն են հանդիսանում, ինչպէս օրինակ, հռոմայեցոց մէջ hostis նշանակում էր թէ թշնամի և թէ օտարական: Զարգացման այս աստիճանի վերայ ազգայնութիւնները սովորաբար թշնամանում են միմեանց հետ: Բացի սրանից մեր թշնամութիւնը ունի և պատմական արմատներ: Բանն այն է, որ հասարակ հայ ժողովրդի

Հասկացողութեամբ, այս թուրքերն են, որ կործանել են իրանց տաճարները, ծաղկած քաղաքները ու զիւղերը և դարձրել են սրանց իրանց մշակ. ծերերը մինչև այսօր էլ տակաւին պատմում են այն ամենն, ինչ որ քաշիլ, տարել են թուրքերի ձեռքից մինչև ոռուների դալը և այս ամենն, անշուշտ, ատելութիւն են ծնեցնում դէպի թուրքերը: Թուրքերն էլ իրանց կարգին տեսնել չեն կարողանում հայերին, այդ ք ե ա ճ ի ու լ ՚ ն ե Ր ի ն, որոնք դեռ երէկ իրանց ստրուկներն էին: Եւ այս ամենը փչում ուռցնում են թէ հայ, թէ մահմեդական անդարդացած մարդիկը:

Ահա՛ ոճիրների այս բոլոր շարժառիթները — գործիչները, որ, ըստ ներման ժամանակին, քննեցինք մենք: Բայց իւրաքանչիւր ընկերական երևոյթ հեռւանք է անբաւ պատճառների, ուստի և սրանք չեն ոճիրների միակ գործիչները — շարժառիթները: Բայց այս բոլոր գործիչների ազդեցութիւնը հասկանալի չէր լինի, եթէ նրանք չը կապւէին ընդհանուր տղիտութեան հետ:

Բայց նախ քան թէ աւարտ կը տամ մեզ հետաքրքրող խնդրին, դեռ ևս ասելու եմ հեռւեալը.

Մեր ծերունիներից շատերը մտաբերելով անցած զնացած օրհնեալ ժամանակները, ասում են՝ այսպէս չէր զղլբաշի (պարսից) ժամանակը. այն ժամանակ ո՛վ կը տար այսքան ոճիրներ. կախ էին տալիս ոճրագործին, աչքն էին հանում, ձեռքերը կարում էին, ոչ թէ հիմիկւայ նման, որ ոճրագործներին հայ են տալիս, պահում բերդերում: Խիստ, ահ ու սարսափ ձգող պատիժներ չեն տալիս, դրա համար էլ ոճիրները շատանում են մեզանում: — Սրան կարելի է ա՛յ թէ ինչ պատասխանել: Առաջին՝ դեռ ապացուցւած չէ թէ այն ժամանակ ոճիրների թիւը նւազ էր այժմեանից. երկրորդ՝ մինչև այժմ չէ ճանաչւած, որ սարսափը պակասացնի ոճրագործութիւնը: Ամենից հաւանականն է, որ այն ժամանակ ոճիրներ աւելի են կատարւել քան թէ այժմ, բայց լոյս չեն հանւել:

Ոճիրների թիւը նւազեցնել կարելի է, բայց ոչ պատժով, այլ փոփոխելով այն ամենն, ինչ որ մենք ոճիրների գործիչ անուանեցինք, հետզհետէ և փոփոխելով իւրաքանչիւր անձնաւորութիւն առանձին առանձին: Ահլը, սարսափը միայն ժամանակաւորապէս կարող են դադարեցնել հասարակութեան մէջ ոճրագործութեան երւան դալը,

բայց չարը բարի դարձնել, ոչնչացնել անհատի մէջ բարոյական պակասութիւնները՝ անկարող են: Ռուս կառավարութեան գլխաւոր ծառայութիւնը մեզանում նրանումն է, որ անձնաւորութեանը միջոցազատութիւն է շնորհել իւր բնական ազդոււմները լոյս հանելու: Նա մեր ծածկւած թշնամուն դուրս է կանչել և մեզ միջոց տւել ուսումնասիրելու նրա զօրութիւնը, գտնելու արմատական միջոցներ նրա դէմ կուելու համար:

Նւ երբ մենք բոլոր ուժով, համերաշխութեամբ պետութեան հետ կը հալածենք ոճիրները, կ'ոչնչացնենք առաւել ստոր զարգացմանը յատուկ մեր ցեղական կենցաղի մնացորդները, կը դադարենք աւետարանն ու զուրանը վատ մեկնաբանելուց, կը տանք ազատութիւն մեր կնոջը, երբ մեր ազնւականութիւնը կը հասկանայ իւր քաղաքակրթիչ դերը, իսկ ազդութիւնները ձեռք կը քաշեն իրար հետ անմիտ ու չիմար թշնամութիւններ անելուց, և երբ մեր մեծամասնութիւնը կը դաստիարակի առաքինասիրութեան և արդարամտութեան մէջ, — ա՛յն ժամանակ մեզ կը ջաջողի պակասացնել մեր ոճիրների թիւը և մենք հպարտութեամբ կարող ենք ասել — որ մեզանում ոճիրները սակաւացել են, որովհետեւ մենք ինքներս առաւել լաւացել ենք: